ՓՐԻՆՋ

ԹԻՒ 1230 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ — 1877 ՆՈՅԵՄԲԵՐ 23

ԱԶԳԱՅԻՆ

Առաջիկայ ուրբաթ օրը սովորական նիստը պիտի ընէ Ազգային ժողովը Պատրիարքարանի մէջ, Օրակարգ նշանակուած ըլլալով կեդրոնական սնտուկի հաշուէկշիռն։

Ինչպէս նախորդ թերթով ծանուցած էինք, խառն ժողովոյ որոշմամբ նոյն օրը Ազգային ժողովին պիտի հաղորդուի՝ քաղաքային զինուորագրութեան համար Բ. Դրնէն Պատրիարքարան ղրկուած պաշտօնագիրը։

Կիւրակէ օրը զինուորական պաշտօնատունէն հրաման եկաւ Պատրիարքարան, որ մեր ազգին կողմանէ ալ մէկը նշանակուի՝ յանդամակցութիւն կեդրոնական մասնաժողովին, որ յիշեալ պաշտօնատան մէջ կազմուած է քաղաքային զինուորութեան կազմակերպութեան համար։ Սակայն Ս. Պատրիարքը քաղաքական ժողովոյ անդամոց ոմանց հետ խորհրդակցելով նոյն օրն անմիջապէս՝ հարկ համարեր է առաջիկայ ուրբաթ օրէն յետոյ ձեռն ի գործ արկանել։

Այս զինուորագրութեան համար թաղերը կազմուած մասնաւոր յանձնաժողովներու անդամ ուզուեր է թաղական խորհուրդներէ ալ. բայց, կլսեմք թէ նոքա ալ կսպասեն Պատրիարքարանի հրահանգին։

Կհաւատին, թէ յունայ Պատրիարքարանն արդէն ընդհանուր ժողով գումարուեր, և յետ երկար խորհրդակցութեան որոշուեր է պատասխանել կայսերական կառավարութեան, թէ յունայ ազգը կհնազանդի կայսերական հրամանին՝ Պատրիարքարանը վստահ ըլլալով թէ քաղաքապահ զինուորութեան մասնակցող քրիստոնեայք ղէնքով չպիտի մասնակցին ներկայ պատերազմին, այլ միայն իրենց գտնուած քաղաքները պիտի պաշտպանեն։

Կըսեն, թէ պուլղարաց ազգային պաշտօնատունէն ալ պատասխան տրուեր է, թէ իրենք ալ պատրաստ են հետեւիլ ուրիշ ազգաց։

—

Շատ մեծ ցաւով իմացանք, թէ Երուսաղիմայ ամեն. Տ. Եսայի Ս. Պատրիարքը հարկադրեր է դրել Պոլիս Ս. Պատրիարք Հօր, թէ Երուսաղիմայ ժառանգաւորաց վարժարանը փակման վիճակի հասած է՝ ներկայ անհնարին անձկութեան պատճառաւ։

Նորին սրբազնութիւնն՝ այս տխուր լուրն առնելուն պէս՝ փութացեր է ինքնագիր նամակաւ մը խնդրել Երուսաղիմայ Ս. Պատրիարք Հօրէն, որ բարեհաճի տակաւին ևս տոկալ և վարժարանը բաց պահել. միանգամայն խոստացեր է մայրաքաղաքիս ձեռնհաս ազգայնոց դիմել և յատկապէս յիշեալ վարժարանին համար նպաստ խնդրել։

Մաղթենք, որ դեռ ևս չերկարին ներկայ տագնապն ու անձկութիւնը. արդէն Արմաշի վարժարանը դոցուեցաւ. ահաւասիկ Երուսաղիմայ վարժարանին վիճակն ալ. եթէ շուտով օգնութիւն չհասնի՝ այս ևս պիտի դոցուի. թաղական վարժարանաց շատերուն վիճակն ալ ակնյայտնի է։

—

Մանչէսթրէն գրուած մասնաւորնամակէ մը դոհութեամբ իմացանք, թէ տեղւոյն պատուարժան ազգայինք 150 ի չափ անդղ. լիրա հանգանակեր են ի նպաստ ազգային Հիւանդանոցի Պոլսոյ, և մօտերս պիտի ղրկեն։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ասկէ առաջ Գարթալի Թաղ. խորհրդոյ Ատենապետ Պաղտիկ աղայի դէմ թաղեցւոյ կողմէ եղած ծանր դանգատներուն վրայ՝ յիշեալ անձը վարչութեան Բաղ. ժողովին հրաւիրուելով, թաղին դպրոցի վարժապետը ծեծելն խոստովանած էր, և ըստ որում ուրիշ խստութիւններ ալ ի գործ դրած ըլլալու մասին բողոքողներ կային, Բաղ. ժողովը քննիչներ կարգելով որոշած էր զկնի քննութեան յիշեալ ատենապետը պաշտօնանկ ընել։

Եւ թէև սոյն քննութիւնը կատարուելն առաջ յիշեալ ատենապետն և իւր պաշտօնակիցները խմբովին հրաժարական մատուցած էին, սակայն ըստ որում Ազգային ժողովոյ որոշմամբ յանձնարարութիւն եղած է այս անդամ Բաղ. ժողովին՝ իւր նախկին որոշումն յիշեալ Պաշտիկ աղայի պաշտօնանկութեան մասին հրատարակել ի պաշտօնէ, հետևապէս հարկ դատուեցաւ սոյն պաշտօնական ծանուցումը հրատարակել ի տեղեկութիւն Ազգին։

19 Նոյեմբեր 1878

'ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պոլիս (ԿԷԼ)

—

Իւսկ. Եէնիմահալլէ. 21 Նոյ. 1877

. . . Խմբագիր

Հոկտ. 18 թուականաւ, և՝ Տրդատ Փափազեան, Պ. Յ. Թորգոմեան և Մելքոն Պ. Պ. Փափազեան ստորագրութեամբ տպեալ տետրակ մը՝ ինչպէս թաղիս գրեթէ համայն ազգայնոց, նոյնպէս և ինձ ղրկուած էր այս անգամ։ Կարդացի ուշի ուշով, և տեսայ որ հրատարակչաց նպատակն ուրիշ բան չէր, այլ թաղեցւոց վստահութիւնը գրաւող երկու անձանց դէմ, որք են Սեթեան և Մելիքեան էֆէնտիները, իրենց ունեցած ատելութիւնը յայտնելու։

Տրդատ էֆէնտի Փափազեան՝ իւր հետ առնելով Պ. Թորգոմեան և Մ. Փափազեան էֆէնտիները, հրապարակ ելեր և իրողութիւններ խեղաթիւրեր է՝ գայթակղեցուցանելու համար միամիտ թաղեցիները. տեսնելով հարկաւ թէ մինչև ցարդ այս նպատակաւ աստ անդ բերանացի թափած ջանքերնին ապարդիւն մնացած է։

Համառօտիւ քննադատենք դոցա իբրև մեծ ինչ գրածները։

Սոյն երեք անձինք, թաղիս ճեմ. երկսեռ վարժարանի 1877 յուլիս 1ի հոգաբարձութենէն կսկսին, և անդամակցաց զանազան պատճառներով հրաժարիլն,– վարժարանին ուսումնական՝ բարոյական ու նիւթական հոգն ու մատակարարութիւնը Մելիքեան էֆէնտիի վրայ մնալը,– նոյն միջոցին նորա անձին դէմ զանազան տարաձայնութիւններ տեղի ունենալը,– թաղական խորհուրդն սոյն տարաձայնութիւնները խեղդելու, և հոգաբարձութիւնը ամբողջացնելու համար իւր անդամներէն մէկ քանին հոգաբարձութեան պաշտօնի կոչելը,– և դարձեալ հոգաբարձութեան պաշտօնը Մելիքեան էֆէնտիի միայնակ վարելը,– հրաժարմանց և ընտրութեանց պարագաները՝ բանաւոր պատճառաց հետևանք ըլլալը յառաջ բերած են։

1876 յուլիս 1ի հոգաբարձութեան անդամք, ինչպէս կխոստովանին իրենք, երկար ժամանակ պաշտօն վարեցին Մելիքեան Գարեգին էֆէնտիի հետ։ Անոնցմէ ոմանց հրաժարման պատճառը՝ անձնական զբաղմունք եղան. ոմանցն ալ՝ ա՛յն անհաճոյ և վշտացուցիչ տարաձայնութիւնը, որոց հեղինակներն կհամարուին այսօր նոյն իսկ սոյն տետրակին հրատարակիչք, որք կարծես ուխտած էին տապալել հոգաբարձութիւնը, ինչպէս որ յաջողեցան մասամբ իւիք։ Շա՛տ աղէկ ըրաւ թաղական խորհուրդը, որ կարևորութիւն չտուաւ ա՛յս նպատակաւ յերիւրեալ տարաձայնութեանց՝ որոց աղբիւրը հարկաւ լաւ կճանչնար։ Շա՛տ շնորհակալք եմք, որ Մելիքեան էֆէնտի ալ անվհատ արձանանալով առաջի ամենայն տարաձայնութեանց ու զրպարտութեանց, շարունակեց և կշարունակէ իւր պաշտօնը սրտի մտօք։

Տետրակին հեղինակները՝ իբր թէ Մելիքեան էֆէնտիի օրով տեղի ունեցած շատ մը անկանոնութիւններ նշանակեր են, որոց մէկն ալ նորա էբր Տեսուչ օրը հանելն երկու ժամ վարժարանը ծուն է եղեր. զայս ըսելով դատափետել կուզեն զանի, սակայն յանգէտս իրենք խոստովանած և հռչակած կըլլան նորա անձնուիրութիւնը. չա՛տ երանելի կըլլային մեր ազգային վարժարանները, եթէ մեր թաղին վար-

ժարանին պէս օրը երկու ժամ ձրի աշխատող տեսուչ ունենային, որ մանաւանդ ներկայ ժամանակիս մէջ՝ ո՛չ նուազ զոհողութիւն է։

Տետրակին մէջ մեծ տեղ բռնած են՝ վարժարանին համար ուսմանց ծրագիր և ներքին կանոնագիր պատրաստելու պաշտօնով կազմուած յանձնաժողովոյ մը ընտրութեան պարագաները. այս անուն անձինքն անդամակից ուղեր են իրենք, թաղական խորհուրդը իրենց նշանակած անձինքն չէ տուեր, մէկ քանին տուեր է. Սեթեան էֆ. սա՛նկ ըսեր է. մեծագոյն մաս չեն ունեցեր և քուէարկութիւն եղեր է։ Եւ ուրիշ այսպիսի զրոյցներ, չո՛ր ու ցամաք զրոյցներ, որոնք չէթէ գրի առնելու և հրապարակ հանելու, այլ մինչև իսկ բերան առնելու արժանի չեն։ Շատ որոնեցի, տեսնելու համար թէ արդեօք իրենք օգտակար ծրագիր մը յօրիներ, կարևոր կանոնագիր մը խմբագրեր են, ու թաղական խորհուրդը մերժե՞ր է. չէ. չտեսայ այսպիսի արդիւնք. այլ չոր ու ցամաք խօսք, բծախնդրութիւն սկիզբէն մինչև վերջ։

Մեր թաղին վարժարանին վիճակին չեն հաւներ. մեք չեմք ըսեր թէ մեր վարժարանը առաջին կարգի վարժարանաց հետ կմրցի բարեկարգութեան ու արդիւնաւորութեան կողմանէ. բայց կըրնամք համարձակ ըսել թէ չա՛տ վարժարաններէ բարեկարգ ու արդիւնաւոր է, և փոյթ կայ աւելի ևս բարեկարգելու ու արդիւնաւորելու. տեսուչ մ՚ունիմք, որ անձնուիրաբար «մէն օր երկու ժամ վարժարանին մէջ կգտնուի, և փութալան Հոգաբարձութիւն մը՝ որ խնամ կտանի և կսիրէ գործել քան թէ մեծաբանել. կարելի չէ, որ առանց երբէք թերութեան ըլլայ. բայց քանի որ այս ոգւով տեսչութիւն և հոգաբարձութիւն կան, հարկաւ այն թերութիւններն ալ կուղղուին։

Տետրակին հեղինակ էֆէնտիներէն կը խնդրուի, որ բարեմտութեամբ վարուին և վաստակաւորները չվշտացունեն, որոց մեծապէս պէտք ու կարօտութիւն ունիմք։

Թաղեցի մը

Եօթներորդ նամակ՝ վսեմափայլ Ստեփան փաշայի Ասլանեան։

Շարունակութիւն ընթացից ուսման Քաղաքային նախակրթարանաց Վիեննայի

Ցրդ. և վերջին կարգ

ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ. — Ա. ընթերցանութիւն. կարդացուած նիւթին վրայ բացատրութեամբ խօսակցութիւն, մանաւանդ բանաստեղծական մասանց նկատմամբ։ Ոտանաւոր գրուածոց չափու և յանգերու վրայ տեղեկութիւն։ —Բ. եօթներորդ կարգի քերականական և գրագիտական ուսանելեաց շարունակութիւն աւելի ընդարձակութեամբ, և աշակերտաց ուշադրութիւնը գրաւելով բայերուն ժամանակաց և եղանակաց գործածութեան, շաղկապներուն և մակբայներուն վրայ։

Գ. երկար նկարագրութիւններ, բաղդատութիւններ ու բացատրութիւններ գրի առնուլ, նիւթն և հիմունքն առաջուց որոշուելով։ Քաղաքային կենաց մէջ պատահած սովորական գործերու վրայ շարադրութիւններ ընել, գործոյն պարագայները կանխաւ և քննադատութեամբ սահմանելով։ Շաբաթը 3 ժամ։

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.— Մանրամասն նկարագրութիւն Աւստրօ-Հունգարական միապետութեան և օտար տէրութեանց հետ յարաբերութեան նորին։ Պատկեր քաղաքակրթութեան բնակչաց և սկզբունք սահմանադրութեան Աւստրիոյ։ (Շուպերթի դասագրքին հետևելով)։

Միջին դարու և նոր ժամանակի պատմութեան պատկեր կամ ամփոփում, ժամանակագրական ընթացքով. մանաւանդ Աւստրիոյ նկատմամբ. —հին քաղաքակրթեալ ազգաց պատմութեան, միջին դարու մէջ տէրութեանց կազմութեան, վերջապէս եւրոպական մեծ տէրութեանց պատմութեան ընդհանուր հանդէս կամ տեսութիւն։ Շաբաթը 5 ժամ։

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ.—Շղթայի կանոն, տոկոսի հաշիւ, տոկոսաց տոկոսի կանոն, ստակներու փոխանակութեան հաշիւ, պարզ տոմարակալութիւն, մտքով հաշուելու վարժութիւն։ (Մօձնիքի դասագրքին հետևողութեամբ) Շաբաթը 4 ժամ։

ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ և երկրաչափական ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ.—յաճախ գործածուած զանազան ձև մարմիններու։ Ճարտարապետական և մեքենական պարզ նիւթերու վրայ վարժութիւն, հանդերձ բացատրութեամբ։ (Մօձնիքի դասագրքէն) Շաբաթը 3 ժամ։

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.— Առջի կարգերուն մէջ տրուած դասերուն մնացորդը և վերջապէս ընդհանուր բնական պատմութեան ամփոփում.—նկարագրութիւն մարդկային մարմնոյ, և առողջապահութեան և ամենէն կարևոր կանոնաց ուսումն։ (Հէլլերի դասագրքին հետևելով) Շաբաթն 2 ժամ։

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ։ Վեցերորդ և եօթներորդ կարգերուն մէջ դաս տրուած նիւթոց վրայ կրկնութիւն և ընդարձակելով դասախօսութիւն.—ճառագայթումն ջերմութեան.—խոնաւութիւն օդոյ.—ելեկտրականութիւն.—ելեքտրօ-մագնիս.—հեռագրութիւն.—խմորում—լուսաւորութեան կաղ.— ներկանիւթ.—լուացումն.—իւղոտ մարմին.—կերակրեղէնք.—ջաղացք.—շոգեշարժ մեքենայ.—թելով և օդով չալող նուագարանք.— ձայն մարդկային—ականջ և լսողութիւն.— աչք և տեսողութիւն.—ակնոց.—աստղաբաշխական դիտակ.—լուսանկար։ (Տէ՛քքէրի դասագրքէն) Շաբաթը 3 ժամ։

ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ.— Ազատ գործիքէ, միայն մատիտ մ՚ունենալով.— վարժութիւն ընդօրինակութեան.—զարդագրութիւն.—գոյներու և նկարչական ճաշակի վրայ դասախօսութիւն։ Շաբաթը 6 ժամ։

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ.— Միաձայն և կրկնաձայն երգեր։ Շաբաթը 1 ժամ։

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ.—Շաբաթն 2 ժամ։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Ցրդ. կարգ

(Մինչև 3րդ կարգ, օտար լեզուի դասախօսութիւն չ՚կայ։)

Ունիլ և լինել, օժանդակ բայերուն խոնարհմունքը.—յօդի և գոյականի և հոլովմանց վերաբերեալ ամենակարևոր տեղեկութիւնք.—յոգնակիի կազմութիւնը.— գոյականներուն ու ածականներուն իգականի ձևերը.— Թուական անուններն.—Դերանուն։

Բէյճի տարրական դասագրքէն թարգմանութիւն։

Ցրդ կարգ

Օժանդակ բայից խոնարհման կրկնութիւն.—մասնական յօդ.— գոյականաց յոգնակիին երբեմն անկանոն կազմութիւնը.— ածական և մակբայ, ու սոնց իրարու բաղդատութիւնը.—դերանուն, թուական անուանք, ներգործական և կրաւորական բայեր։

Վարժութիւն թարգմանութեան վերոյիշեալ գրքէն։

Ցրդ. կարգ

Կանոնաւոր բայից խոնարհմունքը.—կրաւորական, ներգործական և ածանցեալ բայեր.—էական դերանուններն և բայերու հետ զուգադրութիւններն.—ամենէն գործածական անկանոն բայերը։ Վարժութիւն թարգմանութեան։

Ցրդ. կարգ

Անկանոն բայերն և բայերուն եղանակները։ Վարժութիւն թարգմանութեան՝ Բէյճի վերոյիշեալ գրքէն և նոյն հեղինակի Քրէսթոմաթի անուանեալ դասագրքէն։—Արձակ և ոտանաւոր ընտիր հատուածոց ընթերցումն։

Ահա, բարեկա՛մ, հասանք վախճանին, կը տեսնես որ իրաւունք ունէի ձանձրացուցիչ անուանելու թղթակցութիւնս. բայց ինչպէս յառաջն ըսի, բոլորովին զուրկ չէ՛ օգտակարութենէ. մանաւանդ եթէ ուշադրութեամբ զընես ամբողջ դաստիարակութեան ընթացքը զոր ընդարձակօրէն նկարագրեցի, և զտե՛ս հանե՛ս մէջէն այն մէկ քանի կարեւոր կէտերը որ մեր ընդունած դաստիարակութեան ընթացքի մէջ բոլորովին տարբեր կերպով տնօրինուած են։ Առաջիկայ նամակաս, եթէ տակաւին չ՚ձանձրացար(*), սոյն կէտերուն վրայ կը խօսիմ և՝ կաշխատիմ նաև որոնել թէ ի՛նչ միջոց կրնանք գործածել մեր ազգային դաստիարակութեան համար օգուտ քաղելու՝ գերմանական կըրթական մեթոտեն։ Մնամ և այլն

Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

1877 նոյ. 11/25
Վիէննա

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատերազմական նոր լուրեր չկան։ Բայց պաշտօնական հրատարակութիւններէ կիմացուի, թէ Օրխանիյէի համար եղած զրոյցներն անհիմն են. տեղւոյն կայսերական զօրքը կդիմադրէ, ինչպէս նաև Բլէվնայի մէջ է Օսման փաշա, և տակաւին 2–3 ամսուան պարէն և պաշար ունի։ Կարնոյ կողմէն եկած լուրը՝ դարձեալ ձմրան ու ձեան խստութիւնը կհաղորդէ։ Կուրդոյի համար կըսուի, թէ մեծ պարտութիւն մը կրեր է. բայց դեռ ստուգութեան կարօտ է։ Կ՚ըսուսամը, թէ առաջիկայ թերթով աւելի տեղեկութիւն կրնամք տալ՝ պատերազմական անցից վրայ։

Այս անդամ դարձեալ և վերջնական ու ազդու կերպիւ պատուէր եղաւ լրագրաց՝ պատերազմական ամեն լուր ու զրոյց անխտիր և անքննին չհրատարակել։

—

Առաջին աստիճանի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ՝ զինուորական ժողովոյ նախագահ Հիւսէյին Հիւսնի, և նոյն ժողովոյ անդամներէն Իսրահիմ փաշայի, արդէն ունեցած պատուանշաններին փոխուելով։

— Երկրորդ աստիճանի երկրորդ կարգի պաշտօնատարութիւն տրուեցաւ՝ Քէօթահիոյ համարակալ խոլիլ էֆէնտիի։

—Թէհրանի նախորդ դեսպան Հայոտար էֆէնտի՝ Լենկերիի, և զինուորական ժողովոյ անդամներէն Ճէմիլ փաշա՝ Էտիրնէի կուսակալ կարգեցան։

— Կայսերական կառավարութեան կողմանէ պարգևներ բաշխուեր են՝ Ամերիկայէն այս անդամ զէնք բերող շոգենաւուն նաւապետաց ու մեքենավարաց, զէնքը ապահով հասցուներլնուն և կանո-

---

(*) Ձանձրանա՛լ. ընդհակառակն շա՛տ մեծ սիրով ու շնորհակալութեամբ կկարդամք և կը հրատարակեմք. և ուրախ եմք նկատելով որ ո՛չ միայն մեր աղնիւ բաժանորդք, այլ և ուրիշ շատերն ալ յատկապէս ձեռքէ կառնուն սոյն յօդուածները պարունակող թերթերը, և կ՚յանձնարարեն մեզ՝ իրենց կողմանէ ալ խնդրել սոյն յօդուածոց շարունակութիւնը, առանց երբէք կարևորութիւն տալու մերկ իմաստակի մը ընդվայրահաղութեան, որում՝ բոլորովին անծանօթ է բարոյն և օգտակարին ճաշակը։ Ծ. խ.

նաւորապէս դուրս հանելուն համար։

—

Մեծ Եպարքոսն անձնական տկարութեան պատճառաւ երկու օրէ հետէ պաշտօնատեղին եկած չէ. բայց երէկ արտաքին ու ներքին գործոց նախարարներն ապարանքն հրաւիրեր ու ներկայ խնդրոց վրայ խորհրդակցեր է։

—Առաջիկայ դեկտ. ամսոյ 1 ին ընդհանուր ժողովը պիտի բացուի, դարձեալ կայսերական պալատան մէջ, Օգոստափառ Սուլթանին պատգամագրովը։

—Վագքթ գրած է այս առաւօտ թէ, պանքաներու և այլ հայրենասէր անձանց կողմանէ մինչև ցարդ 2–3 հազար լիրա հանգանակեալ է, քրիստոնեայ քաղաքային զօրաց չքաւորաց համազգեստի համար։

—Խալիլ Շէրիֆ փաշա՝ որոյ համար ըսուեցաւ թէ Եգիպտոս պիտի բնակի այսուհետև, հոն չպիտի երթայ եղեր։

— Բ. Դրնէն դեսպանաց ծանուցուեցաւ, թէ Շքոտրայի կուսակալութեան եղերքը պաշարուած է՝ Գարատաղի ապստամբական շարժմանց պատճառաւ։

— Կարսի հրամանատար Հիւսէյին Համի փաշա՝ որ խումբ մը ձիաւորաց հետ աղատիլ յաջողած էր, Կարին հասեր է։

— Ելեւմտից պաշտօնատան մէջ յանձնաժողով մը դրուեր է, անցեալները խնայողութեան համար զեղչուած ամսականները քննելու, և արժանաւորաց ամսականները անզեղչ վճարելու համար։

—Կըսուի, թէ Լիտիրնէի նախորդ կուսակալ Ահմէտ Վէֆիգ փաշա այս երկրորդ անգամ օսմանեան երեսփոխանական ժողովոյ նախագահ պիտի անուանի։

— Տէյլի-Նիուզ լրագիրն գրեր է, թէ Ռուսը Կարս մնած առեններն ժողովրդեան դոյքն աւարեր են։

— Միրալայ Զէքի պէյ՝ տանը բաղնիքին վրայի կապարները, 253 օխայ, զինուորական պաշտօնատունը ղրկեր է։

— Սիսի մէջ արտէ մը հրդեհ պատահելով՝ չրջակայ արտերն ալ ճարակեր, մեծ հրդեհ մը եղեր, ինը հոդի ողջակէզ եղեր, և շատ կարասիք մոխիր դարձեր են։

— Ատանա կղզիի կերպարանք մ'առեր է այս օրերս խիստ յորդառատ անձրեւոց պատճառաւ։ Վնասը պիտի կրնայ որոշուիլ՝ հեղեղաց քաշուելէն յետոյ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսական սահմանադրութիւնը պիտի հրատարակուի առաջիկայ փետրվար 19 ին։

— Պուքրէշի մէջ երբ օտար քաղաքացիի մը կողմանէ կորչագօֆի հարցուեր է թէ հաշտութեան բանակցութիւնը ի՞նչպէս պիտի սկսի, «ի՞նչ ընենք, Թուրքիոյ հետ հաշտութիւն կընքելու գործը յատկապէս մեր գիտնալու բանն է» պատասխաներ է։

—Ռուսաց կայսրը, անցեալները հաշտութեան վրայ իրեն խօսք բացուած ատեն, ըսեր է թէ «Պարոնա՛յք, այժմ կատակի ժամանակ չէ»։ Կայսրը, Կարսի անցքէն յետոյ, նոր յայտարարութիւն մ'ալ ուղղելով առ բանակն Անատոլուի, ըսեր է թէ «պատերազմը դեռ վերջացած չըլլալով՝ զօրքը տակաւին շատ պիպի աշխատի և անձնուիրութիւն ընէ»։

— Կըսեն, թէ Կորչագօֆի իշխանն ալ տեսակցութեան մը մէջ ըսեր է, թէ փարիզի դաշնադրութեան հետքն անգամ չպիտի մնայ։

—Անգղիոյ մէջ այս օրերս նոր տեսակ կերպաս մը երևան հանուեր է շրջազգեստի համար, Բլէնիա անուն։ Այսպէ՛ս անուանուեր է, ըսել ուզելով թէ Բլէնիայի պէս շատ կդիմանայ։

— Սերվիոյ իշխանութիւնը կամաւորներ կժողվէ եղեր, Ռուսաստանէն ընդունած դրամէն երկերկու դրիմից տալով իւրաքանչիւրին։

— Պոմպայի մահմետականաց մէջ լսուելով թէ Կարսի անցքին ժամանակ Ահմէտ Մուխթար փաշա ալ դերի ինկեր է, շատ իրարանցեր, և 30 հազարի չափ անձինք օսմանեան հիւպատոսարանը խըռնելով, և վարձքը իրենք վճարելով՝ Պօլիս հեռագիր քաշել տուեր, և չեն ցրուեր՝ մինչև որ Բ. Դրնէն պատասխան չէ հասեր թէ Ահմէտ Մուխթար փաշա Կարին կդտնուի։ Այս հեռագրոյն վրայ մղկիթները դացեր, և մէկ ժամու չափ աղօթեր են՝ օսմանցւոց յաջողութեան ու յաղթութեան համար։

— Ամսոյս 16 ին, Լոնտրայի մէջ պատգաւորութիւն մը ներկայանալով արտաքին գործոց նախարար լորտ Տէրպիի, խնդրեր է որ Մալթայի պահապան զօրաց թիւն աւելնայ, և անգղիական նաւատորմիղն Պօլսոյ նեղուցէն ներս մտնէ։ Նախարարը պատասխաներ է, թէ՝ Պօլիս երբէք վտանգի մէջ չէ, և Սուէյշի ջրանցքը ո՛ր և է կողմանէ չբռնաբարուիր, և հետեւաբար չեղոքութենէ ելնելու պատճառ չկայ, և թէ՝ անգղիական նաւատորմիղը Պօլսոյ նեղուցէն չպիտի կրնայ մտնել, և սոր համար ա՛յնպիսի պայմաններ կառաջարկուին, զոր Անգղիա չկրնար ընդունիլ, և թէ՝ Անգղիոյ կառավարութիւնը յարմար առիթը տեսնուելուն պէս խաղաղութեան վերահաստատութեան համար իւր բոլոր ջանքն ի գործ պիտի դնէ։

—Պօլսէն Լա Բրվիւ տը Լէօնտի լրագրին հեռագրեր են, թէ Միտհաթ փաշա տեղեկագիր մը ուղղելով Օգոստ. Սուլթանին՝ յայտարարեր է թէ օսմանեան պետութեան համար շատ վտանգաւոր պիտի ըլլայ, եթէ ուղղակի հաշտութիւն կնքուի Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ. և թէ՝ օսմանեան պետութեան ազգային ապահովութեան միակ միջոցն է, արդէն հաստատեալ դաշնադրութեանց տրամադրութիւններն անյեղլի պահել, և թէ՝ անհրաժեշտ հարկ է փարիզի դաշնադրութիւնը ստորագրող տէրութեանց հետ խորհրդակցելով վարուիլ։ — Նորին Վեհափառութիւնն այս տեղեկագիրն Մեծ Եպարքոսին յանձներ է։

— Պալթիկ ծովու մէջ փոթորիկ մ'ելներ, և ռուս նաւատորմղէն Ամիրալ անուն զրահաւորն ընկղմեր, և նաւաղունք ալ չեն կրցեր աղատիլ։

Լոնտոնի եղերքն ալ փոթորիկ մ'ելնելով, շատ նաւեր ընկղմեր, շատ մարդ ղոհ դացեր և 6 միլիոն ֆրանգի վնաս եղեր է։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Փարիզ. 1 դեկտ.—Կուսակցութեանց մէջ կը շարունակէ անհամաձայնութիւնը։ Ասոնք ապահովութիւն կպահանջեն մէկմէկէ։

2 դեկտ.— Զախակողմեանք այսօր ժողովուելով որոշեցին չընդունիլ հաշուէկշիռն, մինչև որ Մաք-Մահոն նախագահն համակերպի ազգային ժողովոյ կամաց։

Բեռլրսպուրկ. 1 դեկտ.— Պէնտէրէն Կալաց երկաթուղւոյ շինութիւնն աւարտեցաւ։ Դանուբի եղերքը Բէթրօվիչի կողմի կամուրջին շինութեան գործն ալ լրացաւ։ Ուրիշ երկու կամրջոց շինութեան ալ ձեռնարկուեցաւ։

2 դեկտ.—Ռուսիոյ և Թունուսի մէջ յարաբերութիւնք դադարեցան, յօդնութիւն Օսմանցւոց Թունուսի կողմանէ զօրք ղրկուելուն համար։ ռուս հպատակք այսուհետև գերմ. պաշտպանութեան ներքև պիտի գտնուին։

Ե-ՐՈՊԱԿԱՆ ԼՐՏԷՐՆԵՐԷՆ՝

Պերլին. 24 նոյ.— Պուքրէշէն ծանուցուած է, թէ ռուսական բանակակեդրոնը Բլէնիայի անձնատուութեան կըսպասէ. և այս պատճառաւ բանակին մատակարարութեան պաշտօնատարն հրամայեր է որ ժամ յառաջ 70 հազար զօրաց համար պարէն ղրկուի Բլէնիայի կողմը։

Փարիզ. 24 նոյ.— Մէմորիալ Տիպլոմաթիք լրագրոյն գրածին նայելով՝ Կարսի անցքը երբէք չէ կրցած խախտել օսմանեան կառավարութեան սկզբունքը, և թէ՝ չպիտի հաշտութիւն կնքէ՝ մինչև որ իւր անկախութիւնն ու ամբողջութիւնը հաշտութեան հիմ չբռնուի։

Լոնտրա. 24 նոյ.— Կլատսթըն երէկ ատենախօսեց արևելեան խնդրոյն վրայ։

« Անգղիոյ կառավարութիւնը քանի որ չեղոք կմնայ, ըսեր է, ազատական կուսակցութիւնն ալ հանդարտ պիտի մնայ։ Կցաւիմ որ, յարեր է, Ռուսիոյ քաջագործութեան ու փառաւորութեան վրայ հասարակաց մէջ սխալ գաղափար կայ։ Եթէ Ռուսիա իւր քաջութիւնն ու փառաւորութիւնը չարաչար գործածէ, նորա չափազանցութիւնները արգիլելու կարող տակաւին քանի մը տերութիւն կայ աշխարհի վրայ. եթէ իւր խոստման վրայ մնայ՝ յայտնի է թէ մարդկութեան մեծ ծառայութիւն ըրած պիտի ըլլայ»։

Բեռլրսպուրկ. 24 նոյ. (պաշտօնական).— Կարսի պահապան զօրքը՝ 32 վաշտ հետևակ, 2400 թնդանօթաձիգ և մէկ կիսաբաժին ձիաւոր է։ Կարսի վրայ յարձակող զօրքը 39 վաշտէ կբաղկանար։ 1 զօրավար, 30ի չափ սպայք և 469 զինուորք մեռան. 43 սպայք և 1790 զինուորք ալ վիրաւորեցան։

Տիֆլիս. 19 նոյ.— Կարսի վերջին պատերազմին ժամանակ, ռուսաց կորուստն՝ մեռեալ և վիրաւոր՝ 5000ի հասած է։ Երէկ 15000 զօրք ալ դէպ ի Կարին ճամբայ ելան։

Բաքուզա. 25 նոյ.— Այսօր գարատաղցիք գրաւեցին Էշբօզիի մօտ Նէհա անուն կարևոր բերդը։ Պարի ամրութիւնք կդիմակալեն՝ թնդանօթաց ընտրութեան պատճառաւ։

Լոնտրա. 26 նոյ.— Բեռլրսպուրկէն առ Մորնինկ-Բոսթ լրագիրն հեռագրուեր է թէ Ռուսիա կաշխատի՝ զԱնգղիա դուրս ձգել հաշտութեան բանակցութեան մասնակցութենէ։

Պերլին. 26 նոյ.— Կիյոմ կայսրը չնորհաւորեց զԱղեկսանդր կայսրը՝ Կարսի անցքին վրայ, և պատուանշան ղրկեց Մելիքօֆ զօրավարին։

Լոնտրա. 25 նոյ.— Աղեկսանդրիայէն հեռագրուած է, թէ Եգիպտոսի Խիվը

անցեալ շաբթու 500 հազար անգղ․ լիրա ղրկեր է Պոլիս ։

Վիէննա․ 23 Նոյ։— Եախրնէէն գրուածին նայելով, մահուան դատապարտեալ 130 պուլղարք աքսորուեր են, միջնորդութեամբ աւստրիական և գերմանական դեսպանաց ։

Բուժելիի երկաթուղւոյն բաժնետոմսերուն վերջին 47դ վիճակահանութեան գլխաւոր արդիւնքն է ։

Թիւ	Պարգև	Թիւ	Պարգև
340141	600000	212105	1000
235330	60000	120305	»
1957935	20000	6387	»
103536	»	472996	»
862576	6000	446005	»
682655	»	228445	»
82961	»	526805	»
1790881	»	525516	»
1706229	»	514958	»
1417247	»	986556	»
514959	3000	682653	»
399090	»	668583	»
138973	»	1087296	»
1380596	»	1066792	»
986560	»	1007821	»
963235	»	1220029	»
1532754	»	1182465	»
1456845	»	1087397	»
1380598	»	1335553	»
1780083	»	1307795	»
1904177	»	1335552	»
1968041	»	1467554	»
49724	1000	1456843	»
28868	»	1437109	»
5372	»	1594555	»

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Նանը-ավիզ տէյիրմէնլէրի հասըլաթընտան սաթըլաճագ օլան իքի նիւզ էլլի պին գըյէ քէբէյին ադչէսի նիւզլիւք գայիմէ նիւզ ղրուշա օլարագ նագտէն վէ բէշինէն վէրիլուպ, օն պէշ կիւն զարֆընտա մէզքիւր տէյիրմէնլէրտէն գալտըրըլմագ շարթը իլէ, պէհէր գընէսի օթուզ պէշ բարայա թալիպի էօհտէսինտէ օլուպ, Թշրինի սանիի րումինին եիկիրմի տէօրտիւնճիւ բէնճշէնպիհ կիւնի միւզայէտէսի պիլ իճրա, գարարը գաթիսի վէրիլէրէք ֆիրուխթ օլաճաղընտան, իշթիրասընա թալիպ օլանլէրին նէվմը մէզքիւրտէ Տարը շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի ։

Պապը Սէրասքէրի

21 Թշրինի սանի 1877

Խալինէի Նվգաֆը հիւմայունտան մազպութ ադարաթը վագֆիյէտէն Օրթաքէօյ վարօշ իսկէլէսինտէ մա միւշթէմէլաթ գահվէ, վէ Գապաթաշ ճատտէսինտէ տէօրթ պապ, վէ Եէնի-պաղչէտէ ալթը, վէ Հըրգայի-սաատէթ ճիվարընտա իքի, վէ Գասըմ-փաշատա տէֆթէրտար-պաշ Հասան Էֆէնտի ճամիի շէրիֆի թահթընտա իքի, վէ Ճէրահ-փաշատա իքի, վէ Եէնի-ճամիտէ տէօրթ, վէ Եաղուպ-աղա ճամի թահթընտա պիր, վէ Պէշիկթաշտա Սէրանճէմս եօղուշունտա պիր պապ քի, ճէման եէկիրմի պապ տէքաքին իլէ Գուրուշէշմէտէ քեային չէշմէնին Սագա կէտիկի, վէ Սուլթան Սէլիմտէ մազաղա, վէ Մամար-աճէմ մահալլէսինտէ պօսթան, վէ Հաթապ-գափուսընտա գահվէ տօքուզուն, փէսքիւյէ եէրի իլէ շէտտէ, վէ Գասըմ-փաշատա ֆըրըն, վէ մանաւըն պեազ ա թէյիլ իշթիրատ օլունաճաղընտան թալիպ պուլունանլէրին նիհայէթ գըլըհճէճէնին եէկիրմի պէշինճի կիւնինէ գատար միւթէաճիլտէրի իլէ պէրապէր Նվգաֆը Հիւմայուն վարիտաթ խարէսինէ կէլմէլէրի ։

Չարէմէյն խազինէսինտէն մազպութ էվգաֆտան ճէնէէթմէքեան Սուլթան Պայազիտ Խան վէլի Թաղ սէրաշ հազրէթլէրի վագըֆը միւթէվէլլիթընտան Գուլէ-գափուսու ճիվարընտա գայիրիսթան ճատտէսինտէ վագըֆ մալիմ էլ հուտուտ իքի գըթա արսա՝ Նվգաֆը հիւմայուն խազինէսինտէն պիլ միւզայէտէ թալիպլինէ ֆիրուխթ օլունաճաղընտան՝ թալիպլէրինին Թարիխի իլանտէն իթիպարէն եիկիրմի պիր կիւնէ գատար Նվգաֆը հիւմայուն վարիտաթ խարէսինէ կէլմէլէրի ։

—

ՆՈՒԷՐ ՄԱՆԿԱՆՑ ՆԱՂԱՆԴԻ

80 երեսէ բաղկացեալ է, և 50ի չափ մեծ և փոքր պատկերներ կպարունակէ։

Քարթօնէ կազմեալին գինն է մէկ հինգնոց Թղթադրամ, և ոսկեզօծինը՝ մէկ տասնոց Թղթադրամ, ոսկեզօծին մէջ հատ մ'ալ գունաւոր և գեղեցիկ պատկեր կայ։

Կը գտնուի Զարդարեան գործարանը Սուլթան համամ թիւ 14 և բոլոր հայ գրավաճառաց քով։

ԹԵՍԱՒՐՈՍԻ

ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Այս պատուական գիրքը այս անգամ շնորհիւ Տէր․ Խորէն եպիսկոպոսի Մխիթարեան գրաբարէն համառօտութեամբ աշխարհաբարի թարգմանուելով Խիմիրի Տէտէեան եղբարց տպարանէն ի լոյս ընծայեցաւ մաքուր տպագրութեամբ, Ցուսալի է որ այս անմահ գործը մեծ ընդունելութիւն պիտի գտնէ ազգային վարժարաններէն և ընթերցասէր հասարակութենէն ։

Գիրքը կազմեալ 316 երեսէ բաղկացած ըլլալով կը վաճառի Եէնի-ճամի Չիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս․ Ղ․ և Նազմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 3 ֆրանք

ԱՌ ԱՐԵԳԱԿՆ

ՄԵԾ ՏՈՒՆ ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԵՂՕՐԷՑ

Վ․ ԾԱՆՆԻ

Բէրա Մեծ փողոց Աղաճամիի թիւ 77

ԵՒ

Կ․ Պոլիս Կամուրջի հրապարակը թիւ 1—2

Եւրոպիոյ առաջին գործարանաց հետ յարաբերութեամբ կապուած, և իւր դեղօրէից ընտրութեամբն և դնոց չափաւորութեամբ հըռչակուած ։

Մակի մթերանոց անուանի Հ․ Նէսթլէ քիմիագէտին շինած Ֆա․ լակթէյէն, որ փոքրիկ տղայոց, տկար կազմ ունեցող և հիւանդութենէ ապաքինելոց միակ սննդարար ուտելիքն համայն Եւրոպիոյ մէջ ընդունուած և ամեն գլխաւոր բժշկաց հաւանութիւնն ստացած ։

Հոն կը գտնուի նաև ։

Պաւտր (մաստակի խմորեալ կաթ) որ մեծ համբաւ ունի Եւրոպիոյ մէջ և շատ կը փնտռուի ։

Սըոֆինըլ տը Քինէն, ղուտ և մաքուր, Բէլթիէ, Տիոպօօք, ծօպսթ և Էվանս Լէզէ ճարտար քիմիագէտներէն պատրաստուած ։

Զէյթ Եաղ, զուտ Քրիսթիանայի Բէթկէր Մէլէրի գործարանէն ելած ։

Եսէրտէ (հինտիպա) խահուէ, Լուսվիսպուրկի Հ․ Ֆրանք գործարանէն ելած ստամոքսի ուժ տուող և ախորժակ բացող որ հասարակ խահուէի հետ խառնելով գինը մեծապէս կիջեցնէ՝ առանց համն ու հոտը փոխելու ։

Արուեստական ատամներ ամեն ժամու մէջ ։

Տէժէնէ ջուր, մազերու անվրիպելի ներկ ։

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏՔ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, նաև ջղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար․ կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը ։ Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի․ արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբը սրտախառնութիւն, կուծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կազեր, գլխի ցաւեր կը վանէ․ մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրելով բոլոր այն աղտեղութիւններէ՝ որ շատ անգամ ղանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական դիրքը կզգենու ։

ONGUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւնք և վէրք բուժելու մասին ունեցած պալսամական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը․ հին կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրիփէնչէ), սրունից և ստեանց վէրքեր կամ բորբոքին կանցնին և կամ կլաւանան․ օգտակար է նաև հարբուխի, հազի, սրտի բաբախման, մանաւանդ օդացաւ (եէլ) բռնած հիւանդութեան ։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սըրաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ ատտիճան որ ըլլայ՝ կը դիմադրաւէ ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուին ամեն դեղավաճառներու քով, և մանաւորապէս Պահճէ-գափու Թաշ խանի կողմերը Պ․ Գասապետնի դեղարանը՝ Նօ․ 7՝ կը ծախուի ։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն աօքթոր Հոլլօուէ ի Լոնտոն Օքըսֆօրտ փողոց թիւ 533 ։

ՊԱՅՄԱՆՔ ՓՈՒՆՋԻ

1․—Փունջը ՉՈՐԵՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի ։

2․—Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ՛ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ գաւառաց համար ։

3․—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի ։

4․—Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ։

5․—Հատը 60 փարայ է, և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով ։

6․—Ծանուցման տողը 3 ղրուշ է մէկ անգամի համար ։ Աւելի ժամն կըլլայ աւելի անգամներու համար ։

7․—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ․ Ս․ Ալաճաճեան, Կ․ Պոլիս Ալաճա-Համամ Խալիլ խան միջին յարկ թիւ 19 ։

ՏՊԱԳՐ․ Ս․ Գ․ ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ

Րիզա փաշա խան թիւ 3

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ

Հ․ Ս․ ԱԼԱՃԱՃԵԱՆ